

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հ. Ռ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԻՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԵԿԸ

Եռորդ 60-ամյա պատմություն ունի երեսնի Զեթ-օճառ կոմբինատը՝ մեր հանրապետության բազմաճյուղ քիմիական արդյունաբերության առաջնեկը։ Նրա ծնունդը կապված է բամբակագործության հետ։ Կենարոնի մանածագործարանների աշխատանքը ապահովելու համար միութենական կառավարությունը 1921-22 թթ. բամբակացանների համար շատ ձեռնաու պայմաններ ստեղծեց. բամբակացանը 1 փութ բամբակի դիմաց ստանում էր առձեռն 3 փութ ցորեն և էժան գներով այնպիսի անհրաժեշտ ապրանքներ, ինչպիսիք են չիթը, շաքարը և զանազան գլուղատնտեսական գործիքներ։ Միծ էր բամբակագործության դերը նորաստեղծ սովետական երկրի վերելքի գործում, ուստի հարկ է որոշ պատմական ակնարկ տալ նրա առաջին քայլերի մասին մեր հանրապետությունում։

Բամբակագործությամբ Արարատյան դաշտում վաղուց են գրադվել Մինչև առաջին համաշխարհային պատերազմը բամբակի ցանքսերը երեվանի նահանգում գրավում էին համեմատաբար մեծ տարածություններ (տե՛ս աղյուսակը) [1, էջ 88]։

Տարեթվեր	1900	1910	1911	1912	1913	1914
Ցանքատարածությունը հեկտարներով	13800	15700	18400	1600	13700	16500

Հունդավոր բամբակի բերքը 1914 թ. անցավ մեկ միլիոն փութից՝ 1923 թ. երեսնում հրավիրվեց Արարատյան դաշտի բամբակացանների հավաք, որտեղ քննարկվեց «Բամբակի վերականգնման հնգամյա ծրագիրը»։

Բամբակագործությունը զարգացնելու և գլուղական տնտեսություններին պետական օժանդակություն ցուց տալու նպատակով ստեղծվեց

ձեռնարկություն՝ առևտրական ընկերության սկզբունքով՝ «Ռուս-հայկական բամբակագործական ընկերություն» («Главное русско-армянское хлопковое товарищество», կրօնատ՝ «Գոռախտ») [2, էջ 4, 10, 14, 17]:

«Գոռախտ» ընկերության մասնակիցներն էին Հայաստանի ժողովունորդը և Մոսկվայի Գլխամբակոմը: Ընկերությունը կազմվեց 1922 թ. վերջինին, բայց օրինական հաստատում ստացավ Աշխատանքի և պաշտպանության խորհրդի կողմից 1923 թ. մարտի 23-ին [2]:

Պայմանագրի երրորդ կետում կողմերի մուծումների վերաբերյալ ասլած է հետևյալը. «Ընկերության հիմնական կապիտալը կազմում է 500 հազ. ոսւրչի ոսկով, որը մուծվում է մասնակիցների կողմից հավասար հիմունքներով: Այդ գումարի 50 %-ը մուծվում է անմիջապես՝ պայմանագրից ստորագրելիս, իսկ մնացած՝ կարիքից ենելով, ծրագրված նախահաշիվներից»:

Հիմնվեցին առաջնակարգ պնևմատիկ բամբակադտիչ գործարաններ, առաջինը Երևանում (1924 թ.), որը հետագայում տեղափոխվեց Արտաշատ, երկրորդը՝ Սարդարապատում (այժմ՝ Հոկտեմբերյան) (1925 թ.): Սարքավորումները մեծ մասամբ ստացվել էին Ռուսական պարտականության մեջ առաջնակարգ ստորագրելիս, իսկ մնացածը՝ կարիքից ենելով, ծրագրված նախահաշիվներից»:

Ստորև բերված են բամբակի ցանքատարածությունների և բերքի վերաբերյալ որոշ թվային տեղեկություններ [1, էջ 88]:

Տարեթվերը	1923	1924	1925	1926	1927	1928
1. Ցանքատարածությունները հեկտարներով	4000	12800	13800	11900	12800	14300
2. Հունգարո-բամբակի բերքը ֆթերով	176000	672038	823348	471677	692200	—

Երբ երկրում ավարտվեց տնտեսության վերականգնման շրջանը, մեր հանրապետությունում նույնպես բարեփոխվեց պարենի դրությունը: Արդեն բնաբերքային փոխանակում շէր պահանջվում, և բամբակացանները գերադասում էին վարձատրվել շերվոնեցով, որը շուկայում իր գնողունակությամբ համազոր էր ոսկուն:

Ստորև տրվում են բամբակի ցանքատարածությունների շափը և բամբակի բերքը Հայաստանում ըստ տարիների [3, էջ 30]:

տարեթվեր

1940	1950	1953	1955	1956	1957	1958	1959	1960	1961	1962	1963	1964	1965	1966	1967
ցանքատարածությունները հազար հեկտարով															
16,0	17,0	18,0	18,5	16,0	14,7	14,2	13,3	13,9	13,2	12,2	10,0	9,0	6,5	3,5	1,6
հունդագուր բամբակի քանակը հազար տոննայով															
1,6	38,8	37,5	36,2	28,8	28,5	36,0	30,2	37,3	27,2	28,1	15,4	16,0	8,3	3,3	0,7

Աղյուսակից երեսում է, որ ցանքատարածությունների աճը հնարավոր առավելագույնին՝ 18500 հեկտարի է հասել 1955 թ. որից հետո նըլկատում է աստիճանական կրճատում, իսկ 1968 թ. դադարեցվել է այդ կուլտուրայի մշակությունը Հայաստանում։ Այն փոխարինվեց բանջարաբությամբ և խաղողագործությամբ։ Բամբակագործությունը հսկայական թափ ստացավ Աղբբեշանում և Միջին Ասիայի հանրապետություններում։

Երեսում Զիթհան-օճառի գործարան հիմնելու միաբը պատկանում է Հայաստանի Ժողկոմիսորճի նախագահ՝ Ս. Լ. Խոկաշինին։ Նրա նախաձեռնությամբ Ռոստովի իր հայրենակիցները 1922 թ. երեան են ուղարկում ձեթ-օճառի արտադրության սարքավորում։ Ս. Լ. Խոկաշինին հայտնի դարձավ նաև, որ գեռս նախահեղափոխական Արագդայանում, որը պատկանում էր կոմս Շերեմետեվին, բամբակագույն և ձիթհան գործարաններ հիմնելու փորձ է արվել։ Սակայն պարզվեց, որ բամբակագույն սարքավորումից մնացել էր միայն բարձր ճնշման մամլիչի մի մասը։ Ձիթհան մասում մերենաները համեմատարար լավ էին պահպանվել։ Այդ սարքավորումները, ինչպես նաև Ռուբեկստանից բերված մի քանի այլ մերենաներ դարձան ձեթ-օճառ գործարանի հիմքը։ Ակզրնական շըռշանում տարածայնություններ ծագեցին գործարանի հոգորության վերաբերյալ, այսինքն՝ որքան պետք է լիներ մշակող բամբակի սերմի տարեկան քանակը փթթերով։ Վեճը 1—2 միլիոն փթի շուրջն էր։

Այդ ժամանակ Երեան ժամանեց Գլխամբակկոմի պատվիրակությունը, հանձինս նադարովի և Սոլովյովի, որոնք հավանություն տվեցին հողմողկոմ Արամայիս Երդնկանի առաջարկին, և ընդունվեց 2 միլիոն փթի տարրերակը, ի նկատի ունենալով, որ արտադրության շահութաբերությունը թույլ կտա հումք ներմուծել նաև դրսից։ Կաղմաց տեխնիկական հանձնաժողովը, հանձինս ինժեներներ Պետրի Դավիդովի (Թրիլիսից), Քերգելսոնի և Սոլովյովի, որոնք, ենելով գործարանի ծը-

բազրված հզորությունից, ավեցին արտադրական մասնաշնքերի մոտավոր չափերը:

Տնտեսական հաշվարկներից հետո մնում էր կազմել գործարանի նախագիծը: Այդ աշխատանքը կատարվեց կոլեկտիվ ուժերով: Տեխնոլոգիական մասը կազմվեց տողերիս հեղինակի ղեկավարությամբ և ինժեներ Հ. Մնացականյանի ու տեխնիկներ՝ Մ. Զալարյանի, Զալինյանի և Գասպարբեկյանի մասնակցությամբ: Եինարարական մասը ղեկավարում էր Ռ. Քաջազնունին, որին աշխատակցում էին ինժեներներ Մուշեղ Մելիք-Հայկապյանը (աշխաղեկ), Դնումին և Տեր-Դանիելյանը:

Միջին Ասիայից աշխատելու եկան մասնագետներ Պավել Լուգինը և Միքայել Ղալաչյանը: Տեղում էլ կային փորձված մեքենագետներ՝ եղբայրներ Արտյուշա և Գարեգին Բաղդատյանները, Սուրեն և Սմբատ Հովհաննիսյանները, Սերգեյ Սարովսանբեկյանը, Տիգրան Ստեփանյանը, Սամսոն Եղիազարյանը, Լևոն Բոնիաթյանը և այլք:

1924 թ. աշնանը Երևանի բամբակազտիչ գործարանի կողքին սկսվեց ձիթհան օբյեկտի կառուցումը: Գործարկումը տեղի ունեցավ 1926 թ. հունիսի 26-ից մինչև օգոստոսի վերջը, որից հետո օբյեկտն սկսեց կանոնավոր աշխատել: Հանդիսավոր բացումը տեղի ունեցավ նույն թվականի նոյեմբերի 29-ին, որին ներկա էին մոտ 500 հոգի, այդ թվում Թուրքիայի և Իրանի փոխհայուպատուսները:

Ժողկոմիսորճի որոշմամբ կարմիր տախտակին գրվելու պատվին արժանացան հետևյալ անունները՝ Մելիք-Աղամիրյան, Պավել Լուգին, Արիստակես Գրիգորյան, Ավետիս Աղեկյան, Խաչիկ Խաչիկյան և Լևոն Բոնիաթյան [4]:

Եինարարության ընթացքում գործարանի վարիչն էր Արիստակես Գրիգորյանը, բայց երբ սկսվեց շահագործումը նրան կարճ ժամանակով փոխարինեց քիմիկոս Տրապիդոնցյանը, իսկ հետագայում նորից պաշտոնավարեց Գրիգորյանը: 1927 թ. առաջին եռամսյակում գլխավոր տեխնոլոգի պաշտոնը վարելու համար Թրիլիսից Երևան հրավիրվեց Գևորգ Գեգելյանը, որը հինգ տարի աշխատեց գլխավոր ինժեների պաշտոնում, այնուհետև նույն պաշտոնով փոխադրվեց Հրուշակեղենի նորաստեղծ գործարանը:

* * *

Օճառի արտադրությունը կապված է առաջին հերթին գլիցերինի զտման հետ: Բոլոր ճարպերը, ձեթերը, որոնցից պատրաստվում է օճառը, պարունակում են շուրջ 10% գլիցերին, որը քիմիապես միացած է

օլմինի, պալմիախնի, ստեարինի և այդ շաբթի օրգանական այլ թթուների հետ:

Ընդհանրապես օճառի ստացման ընթացքում գոյացող զլիցերինը խառնվելով կաթսայի բանած ջրիքին, թափվում էր կոյուղի: Մինչև 30-ական թվականները այսպիսին էր վիճակը միջինասիրական բամբակամբ համբաման գործարաններում:

Այլ կերպ էր կազմակերպված օճառի արտադրությունը և վրապական գործարաններում: Այստեղ սկզբնական յուղային նյութերից զտում էին զլիցերինը և հետո մնացորդը ուղղում դեպի օճառի կաթսաները ջտման տեխնոլոգիան ֆիբրմաների կողմից դադանի էր պահպամ, և մասամբ դա էր պատճառը, որ զլիցերինի արտադրությունը տարածում չէր ստացել այլ երկրներում: Մինչդեռ զլիցերինը արժեքավոր նյութ է քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և, հատկապես, պայթուցիկ նյութերի ստացման համար Ցարական Ռուսաստանը մեծ քանակությամբ զլիցերին էր ներմուծում արտասահմանից:

Երեանի ձիթհան գործարանում ձեռնամուխ և դան զլիցերինի արտադրության կազմակերպմանը: Այս գործում օգնության և կավ նախահեղափոխական Բարձի փորձը, և արծե համառոտակի կանդ առնել այդ փորձի պատմության վրա, որովհետև զլիցերինի արտադրության տեխնոլոգիան ամրողացնելու մշակվեց տեղում առանց դրսի օգնության: 1900-ական թվականներին Փարիզից Ամիշերոն է գալիս ֆրանսիացի հանքային ինժեններ Պոլ Վերդավենը: Նա առաջարկում է Հորերի խորքում պայթեցումների միջոցով վերստին կյանքի կոչել հյուծված նավթահանքերը: Հդանում է նաև զլիցերինի արտադրության միտքը: Այդ նպատակով նա գործարքի մեջ է մանում քաղաքի օճառի գործարանատերերի հետ: Զնշին վճարով ձեռք է բերում օճառի հումքը (ձեթեր, յուղեր), քիմիական և դանակով անշատում է զլիցերինը և մնացորդը վերադարձնում տերերին՝ օճառի արտադրության համար:

Ինչպես նշվեց, յուղային նյութերը պարունակում են շուրջ 10% զլիցերին և 90% օրգանական թթուներ: Հենց վերջիններն են, որ կառատիկ սողայով մշակվելուց հետո վերածվում են օճառի:

Վերդավենի օգուտը հենց այդ 10% զլիցերինն էր, որ նա անշատում էր, իսկ գործարանատերերինը՝ որ ստացված մնացորդը կարելի էր մշակել ոչ թե կառատիկ սողայով, այլ ավելի էժան կալցինացած սողայով, ապահովելով նույն ելքը և որակը:

Այդ նպատակով անհրաժեշտ էր ունենալ մի փոքր քիմիական գործարան: Վերդավենը նախագիծը պատվիրում և ստանում է Մարսելից, իսկ գործարանի համար մի շենք է վարձակալում Բարվի «Ակ քաղաք» կոչված թաղամասում: Մարքավորումը պատրաստվում է տեղում, իսկ

մոնտաժային և գործարարական աշխատանքները նա հանձնարարում է նավթահորերում պայթեցումներով զբաղվող իր մասնագետին՝ ինժեներ-քիմիկոս Հ. Մելիք-Աղամիրյանին։ Դորժարկումը տեղի է ունենում 1914թ. հունիսի վերջերին։ Անհրաժեշտ ուսագենաց, որ կոչվում էր «նեղ-օղակ», ներմուծվում էր Ավստրիայից։

Առաջին փորձը բավականին հաջող էր. ստացվեց 88% հում գլիցերին, իսկ մնացորդը՝ օճառի հիմնական նյութը, վերադարձվեց գործարանատերերին։ Սակայն շնորհվեց առաջին համաշխարհային պատերազմը և Պ. Վերդավենը փակեց գրասենյակն ու գործարանը և մեկնեց հայրենիք։ Նրա գլիցերինի սարքը դարձավ հետագա դեպքերի գոհ և լրիվ բայցայվեց։

Երևանի ձիթհան բաժանմունքի գործարկումից հետո հերթական հարցերն էին օճառի և գլիցերինի արտադրության կազմակերպումը։

Գլիցերինի արտադրամասը նախագծելիս որոշվեց ընդորինակել Վերդավենի գործարանի տեխնոլոգիական սխեման ըստ Հ. Մելիք-Աղամիրյանի տվյալների։ Դա ճիշտ որոշում էր, քանի որ սխեման մշակվել էր Մարսել քաղաքի առաջնակարգ մասնագետների օգնությամբ և բազմիցս ստուգվել գործնական պայմաններում։

Իհարկե, մեծացվեց արտադրության հզորությունը և որպես կատալիգատոր արտասահմանյան «նեղ-օղակ» փոխարեն կիրառվեց «Պետրովի կոնտակտ» կոչվող նյութը։

1927 թ. սկսվեց գլիցերինի արտադրամասի շինարարությունը, իսկ գործարկումը տեղի ունեցավ 1929 թ. կոմբինատի գլխավոր ինժեներ Գ. Գեգելյանի ղեկավարությամբ, որն այդ գործում մեծ ծառայություններ ուներ։ Նա ևս ամրապնդեց լաբորատորիայի կապը արտադրության հետ։

Օճառի այն տեսակը, որ կոչվում է սոսապստակային, սկսվեց արտադրվել համարյա միաժամանակ ձիթհան բաժանմունքի հետ, որովհետև նրան հումք էին ծառայում այն յուղային թափոնները, որ գոյանում էին ձերթի զտման ընթացքում։

Սոսապստակային օճառները ցածրորակ էին, նրանց չորացման և ձեավորման համար երկար ժամանակ էր պահանջվում։ 1928 թ. ներմուծվող սալոմասի օգտագործումով հնարավոր եղավ տեղում կազմակերպել ձեռքի օճառի փոքր արտադրություն։

Այդ թերի արտադրությունը լիովին բարեփոխվեց 1942 թ., երբ ստացվեցին առաջնակարգ սարքավորումներ, և ձեռքի օճառի արտադրությունը տարեկան հասցեց մոտ 2400 տ. [5], իհարկե, օգտագործելով ներմուծվող սալոմասը։

Հետագայում, երբ կազմակերպվեց սալոմասի սեփական արտադրու-

թյումը, օճառի բաժանմունքն ընդլախվեց և տարեկան արտադրանքը հասավ 6000 տոննայի [5]: Դա հնարավոր դարձավ 1944—1945 թթ., երբ ձիթհան գործարանին կից հիմնվեցին ջրի էլեկտրալիզի կայանը և հիգրոպենացման արտադրամասը, որտեղ ջրածնի ներդրությամբ հեղուկ յուղերից ստացվում է սալմասը:

Անհրաժեշտ ենք համարում տալ սալումասի ստացման վերաբերյալ որոշ բացարարություն:

Յուղատու բույսերից, այդ թվում նաև բամբակից ստացված յուղային նյութերը մեծ մասամբ հեղուկներ են՝ ալիքատիկ շարքի տարրեր թթուներ, որոնց կարելի է բաժանել 2 խմբի. Հապեցած թթուներ, որոնք իրենց կազմում ունեն կրինակի տղատ կապեր և հապեցած թթուներ, որոնք չունեն այդ կապերը:

Ստորև բերվում են մի քանի հարավաթթուների թիմիական բաղադրությունը, հալման և պնդանալու շերմաստիճանները [6, էջ 903]:

Թթուներ	Կրինակի կապերի թիվը	Հալման ջերմաստիճանը °C	Պնդանալու ջերմաստիճանը °C
Ախուղենաթթու $C_{17}H_{29}COOH$	3	-11	—
Ախուղեթթու $C_{17}H_{31}COOH$	2	-5	—
Օլեինաթթու $C_{17}H_{33}COOH$	1	14	4
Պալմիտինաթթու $C_{15}H_{31}COOH$	չկան	63,1	62,8
Ստերինաթթու $C_{17}H_{35}COOH$	չկան	69,6	69,3

Սյունակի առաջին երեք թթուները պատկանում են շապեցած թթուների խմբին: Բամբակի յուղի մեջ գլիցերինի հետ միացած շապեցած թթուները կազմում են 70%: Թիմիան հնարավորություն է տալիս ձեթերի մեջ գտնվող շապեցած թթուները ջրածնին միացնելով դարձնել հագեցած: Մեակցիան տեղի է ունենում ավտոկլավներում մոտ 200°-ում և 3 մինորատ ճնշման տակ: Որպես կատալիգատոր օգտագործվում է սիկլի փոշին: Այդ մեթոդով մշակված հեղուկ ձեթը վերածվում է ճարպանման սպիտակ նյութի՝ սալումասի: Մեկ տոննա սալումաս ստանալու համար պահանջվում է 75 մ³ ջրածնին և 472 կվտ-ժամ էլեկտրաէներգիա: Սալումասի հալման կետը 42—48°C է: Օճառի արտադրության մեջ այն լիովին փոխարինում է զտած կենդանական ճարպին:

Հիգրոպենացման արտադրամասի նախագծումն ու կառուցումը դժվարություն չեր ներկայացնում, որովհետեւ դեռևս նախահեղափոխա-

կան շրջանում նման գործարաններ աշխատում էին Հյուսիսային Կովկասում: Նույնը կարելի է ասել և էլեկտրալիզի կայանի մասին, որի ամբողջ սարքավորումը գործարանը ստացավ 1944 թ. ԱՄՆ-ի «Ձեռներալ մոթորս» ֆիրմայից: Նրա մեջ փոփոխական հոսանքը հաստատումի վերածելու համար առաջին անգամ օգտագործվեց սիլիցիդ ուղղիլը: Տարիներ անց կայանը փոխարինվեց նոր, ավելի բարձր արտադրողական սարքավորումով և այժմ նրա էլեկտրական հղորդությունը կազմում է 1300 կվտ, իսկ ջրածնի ելքը՝ ժամում. 160 մ³: Նատրիում քլորիդի էլեկտրալիզային արտադրությունը, որն առաջին հնգամյակի ծրագրով նախատեսվում էր կազմակերպել ձեթ-օճառ կոմբինատում, կազմակերպվեց կառւչուկի գործարանում, որտեղ և ստացվում է օճառի համար անջրածեցտ կծու նատրիումի լուծույթը:

* * *

Երևանի ձիթհան գործարանը հարմարեցված է եղել միայն բամբակի սերմ մշակելու համար:

Պատերազմի տարիներին բամբակի սերմի հայթայթումը խիստ դժվարացավ, մինչդեռ Կովկասի զանազան վայրերից կարելի էր ստանալ ուրիշ բուսական սերմեր՝ արևածաղիկ, սոլա և այլն, բայց այս դեպքում անհրաժեշտ էր արմատապես փոխել տեխնիկական ընթացակարգը այն հաշվով, որպեսզի կճեպավոր սերմի աստիճանական մշակումից հետո ստացվի «միզգա»* և սրանից քամզի ձեթը: Այդ դժվարին գործն իրականացրին մի խումբ աշխատակիցներ՝ Զ. Զալինյանը, Վ. Բարխաչյանը, Ա. Գորաբյանը, Ն. Ազատյանը, Ա. Բարսեղյանը և Ա. Զելցբուրգը: 1942 թ. հաջողվեց պլանից դուրս արտադրել ուղմանակատին անհրաժեշտ ձեթ և օճառ:

Հետպատերազմյան շրջանում** կոմբինատի գարգացումն ընթացավ առաջավոր տեխնիկայի ներդրման ուղիով, որի շնորհիվ մեծացան արտադրական կարողությունները և ստեղծվեցին նոր արտադրություններ:

1945—46 թթ. կոմբինատի սիրտը՝ միզգայից ձեթի ստացման արտադրամասը, ենթարկվեց արմատական տեխնոլոգիական վերափոխումների: Դրենաժային մամուլները փոխարինվեցին «էքսպելիդիներ ՄՊ-2 և ՄՊ-21» մամլիչներով: Վերջիններս ունեին մի շարք առավելություններ:

* «Միզգան» մանրացրած, բուված սերմն է, որից ձնշման տակ ծորում է ձեթը:

** Կոմբինատի հետպատերազմյան շրջանի մասին տեղեկություններ է ավել գործարանի աշխատակից, ինձեններ Ռ. Գարբիելյանը, որին հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում:

շին պահանջում դեֆիցիտային փաթեթների անընդմեջ օգտագործում, նվազում էին ձեմի կորուստները և, որ ամենակարեռն է, աճում էր գործարանի հարությունը, իմեն նախագծով նախատեսված էր 24 ժամում մշակել 100 տոննա սերմ, այսինքն՝ տարեկան 33000 տոննա, ապա նոր մամուլներով կարելի էր մշակել տարեկան մինչև 55000 տոննա բամբակի սերմ:

1962 թ. կոմիտինատում հիմնվեց Էրտարակցիայի արտադրամասը Այսաեղ բուսաբը մշակվում է օրգանական լուծիչով, որի ընթացքում յուղն անցնում է լուծիչի մեջ, այնուհետեւ թորման միջացնով առանձնացվում է ու ոաֆինացվում և օգտագործվում իրրեն մարուր մնադանյութ: Խսկ բուսաբը վերածվում է ալյուրանման փոշու, որը ճիշտ է, ունենալով յուղի չնշին պարանակություն՝ մոտ 1,75%, հարուստ է սպիտակուցներով և դրանով խսկ դառնում է կենդանիների համար արժեքավոր կեր: Այս անինուղղիայի շնորհիվ ձեմի ելքը բուսական սերմից 70%-ից հասնում է մոտ 95 տոկոսի: Ճիշտ է, որ բարդ պրոցես է, բայց լիովին արդարացվում է անտեսապես երականացվեց և մի այլ խոշոր ճեռնարկում՝ կառուցվեց մարդարինի գործարան, որի արտադրանքի համար պահանջվող հիմնական նյութերը ստացվում են հենց կոմիտինատում:

Միաժամանակ կատարելագործվում էր նաև օճառի արտադրությունը, համալրվելով նոր սարքավորումներով, որոնք կրծատում էին օճառի կորուստները և իշխնում չերմային ու էլեկտրական էներգիայի ծախսերը: Հիշյալ սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու և պրոցեսները բարեփոխելու գործում կարևոր մասնակցության համար հանրապետական մամուլը դրվագանքով է նշում Ս. Բարսեղյանի, Գ. Թագվորյանի, Մ. Գևորգյանի, Գ. Հակոբյանի, Ա. Ասատրյանի, Զ. Մարգարյանի, Գ. Եղյանի, Ա. Եփրեմյանի և գլխավոր ինժեներ Ա. Զելյորդի անունները [5]:

Երկար տարիներ օճառի արտադրամասում զեկավար աշխատանք է վարել Կրասնոդարի ինստիտուտն ավարտած ինժեներ-տեխնոլոգ Ս. Սըմսարյանը: Նույն ինստիտուտի շրջանավարտներից է նաև Բ. Բաղդասարովը, որը մինչև 1978 թ. աշխատել է որպես գլխավոր ինժեներ:

Հիշյատակության արժանի են նաև Վ. Բուրխաչյանը, Ռ. Դաբրիելյանը, Ա. Զոհրապյանը և Մ. Եփրյանը:

Բամբակի բերքի աճը մեր երկրում նպաստավոր պայմաններ ստեղծեց Երևանի ձեմ-օճառ կոմիտինատը հումքով մատակարարելու համար: Դա հնարավորություն տվեց էլ ավելի մեծացնել գործարանի արտադրական կարողությունը: Հարկ եղավ շնեկային մամուլները փոխարինել նոր տիպի՝ այսպես կոչված «ֆոր-մամուլներ»-ով, որոնք օրվա ըն-

թացքում (24 ժամում) մշակում են 80—140 տոննա բամբակի սերմ։ Քուսպը ստացվում է 12—14% յուղի պարունակությամբ, որը էքստրակցիայի միջոցով լիովին անշատվում է։

«Ֆոր-մամուլների» տեղադրումով նախատեսվում էր զգալիորեն բարձրացնել ձիթհան բաժանմումի արտադրական կարողությունը, իշեցնել ձեթի կորուստը, բարելավել որակը և կրճատել սպասարկող բանվորների թիվը 25-ով [5]։ «Ֆոր-մամուլային» առաջին երկու ագրեգատները տեղադրվեցին 1965 թ., իսկ հաջորդ երկուսի տեղադրումը սկսվեց 1967 թ. և ավարտվեց 1968 թ.։ Այսպիսով, գործարանի տարեկան կարողությունը 1926 թ. համեմատությամբ աճեց շուրջ 4—5 անգամ, որը պահանջեց արդիականացնել նաև էքստրակցիայի պրոցեսը, համապատասխանեցնելով քուսպի քանակին։

Զգտած ձեթի օրական ելքը կազմեց 42 տոննա, որը զտումից հետո իջնում էր 35 տոննայի։ Ի դեպ, էքստրակցիայի եղանակով ստացված ձեթը գտումից հետո իր օրակով չի վիզում մամլիչների ձեթին և խառնրվում է նրա հետ։ Ձեթի տարեկան պլանային ելքը հավասար է 13500 տոննայի։

Արտադրված ձեթի միայն 10%-ն է արտահանվում, մնացած 90%-ը գործածվում է տեղում սալոմաս պատրաստելու համար։ Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ սալոմասը հիմնական նյութ է թե՛ օճառ և թե՛ մարգարին* արտադրելու համար։ Սեղանի (ուտելու) մարգարինի մեջ մտնում են 32—35 տոկոս սննդային սալոմաս, 10% կարագ, քիչ քանակությամբ կաթ և մնացածը՝ զտած ձեթ։

Եթե ընդունենք բամբակի սերմի միջին յուղայնությունը 16—20%, ապա նրա 70%-ը արտադրվում է «ֆոր-մամուլային» և 25%-ը էքստրակցիայի եղանակով։

Սալոմասի օրական արտադրությունը հավասար է 28—30 տոննայի։ Ձեթի զտումից ստացվում է մոտ 12% տականք, որը գործածվում է տնտեսական (լվացքի) օճառ պատրաստելու համար։

«Ֆոր-մամուլային» փուլի իրականացման գործում մեծ ներդրում ունեն Ա. Բարսեղյանը, Բ. Բաղդասարովը, Ա. Հարությունյանը, Ռ. Գարբրիելյանը, Է. Դանիելյանը, Ա. Ի. Զելցրուրդը, Կ. Եղիազարյանը, Ն. Ազատյանը, Գ. Հովհաննյանը, Մ. Ելվյանը, Ս. Զոհրաբյանը, Գ. Փափառյանը, Օ. Սարդարյանը։ Վերջին երեքը անվանի փականագործներ են։

1964—65 թթ. գլիցերինի բաժանմունքում նույնպես մտցվեց մի էական նորություն։ Հրաժարվեցին «Պետրովի կոնտակտ» կատալոգա-

* Մարգարինի բաղադրության մեջ մտնող ձեթը նախօրոր ենթարկվում է հատուկ մշակման, որպեսզի կորցնի իր յուրահատուկ հոտը։

տորից, և զիցերինի ստացման ռեակցիան կատարվում է գոլորշու 22—24 մմովորա ճնշման տակ, մոտ 230°C ջերմաստիճանում որոշ բանակով չի մասնակցությամբ ։ Գիցերինի արտադրանքը հասավ տարեկան 400 տոննայի։

Տարեցարի աճում են կոմբինատի արտադրական կարողությունները Ներկայումս կոմբինատը արեկան արտադրում է 12500 տոննա ձեթ, 9000 տոննա սալոմաս, 6000 տոննա մարգարին, 24000 տոննա օճառ և այլն ։ Իր համախառն արտադրանքի ծավալով, որը հասնում է շուրջ 30 մետրոն ուղղու, կոմբինատը առաջավոր տեղ է գրավում հանրապետության գործարանների շարքում։

Ներկայումս կոմբինատում աշխատում են 500 հոգի, այդ թվում 68 ինժեներ-տեխնիկներ, մնացածը՝ բանվորներ։ Կարեսը է նշել, որ «Երսակի լիրյան» շրջանում աշխատողների թիվը եղել է 700 [5], որից 600-ը բանվորներ և 100-ը ինժեներ-տեխնիկներ։ Աշխատողների թիվը կրճատումք, երբ արտադրանքի ծավալը գրեթե կրկնապատկվել է, բացարձումք է նոր տեխնիկայի արմատավորումով և միջանկյալ պրոցեսների մերենայացումով։

Կոմբինատն այսօր բարդ ճշուգավորված քիմիական կոմպլեքս է, բաղկացած ձեթի, զիցերինի, տարրեր տեսակի օճառների, շրածնի, թթվածնի, սալոմասի, կենդանակեր նյութերի («շրոտի և կճեպիք») մարդարինի արտադրություններից, որտեղ շահագործման պրոցեսներն իրագործվում են առաջավոր լաբորատորիայի անմիջական հսկողությամբ։

Կոմբինատի արտադրական վերելքը, որն ընթացել է սեփական շուրջուրի աղբյուրների բացակայության պայմաններում, փայլուն ապացուց է այն առավելությունների, որ ունի սոցիալիստական հասարակարգը։

А. Р. МЕЛИК-АГАМИРЯН

ПЕРВЕНЕЦ ХИМИЧЕСКОЙ ПРОМЫШЛЕННОСТИ АРМЕНИИ

Р е з ю м е

Одним из крупных хозяйственных мероприятий молодой Советской Армении было решение о сооружении хлопкомаслобойного завода с использованием хлопковых семян—продукта организованного хлопководства. Переработочная способность завода

была определена 2 млн пудов семян в год. Схема технологических процессов переработки семян была аналогична той, которая была принята на хлопковых заводах Средней Азии. В отличие от последних было решено организовать и глицериновое производство.

К строительству завода приступили в 1924 г. на территории ереванского хлопкоочистительного завода, передав это дело целиком в ведение Армхлопкома. Завершилось строительство летом 1926 г. и официальный пуск праздновали 29 ноября в день советизации Армении. После ликвидации в республике хлопководства, производство было переведено на другие виды сырья, для чего требовалось внести существенные изменения в конструкцию имевшегося оборудования. Коренным изменениям подвергалась прессовое отделение—шнековые прессы были заменены формпрессами, что увеличило выход масла. Новая технология потребовала и постройку цеха экстракции.

Поворотным пунктом в производственной жизни комбината явилось создание крупного производства саломаса, для чего были построены цеха гидрогенизации жиров и электролитическая установка выделки таза водорода. Увеличение саломаса позволило укрупнить мыловаренное производство и построить цех маргарина.

Новым в технологии получения глицерина явились отказ от применения катализатора и контакта, и на автоклассный метод при температуре 230°C и давлении 24 атм.

Беспрерывный рост технических ресурсов с годами привел к тому, что в конце семидесятых годов комбинат производил в год: 12500 т масла, 9000 т саломаса, 6900 т маргарина, 2400 т мыловаренной продукции и соответствующее количество сырого глицерина. Валовая стоимость всей годовой продукции комбината составляла 30—32 млн рублей.

ЧИЧИПРИЗЫ

- 1 Авалишвили И. В. Площадь, сбор и урожайность хлопчатника в Закавказье. Тифлис, 1928.
- 2 АОР, фонд 192, опись I, дело 57.
- 3 Развитие хлопководства в СССР, М., 1969.
- 4 «Ապրեղային Հայաստան», 29 նոյեմբերի 1926 թ..
- 5 «Коммунист». 8.XII.1966 г.
- 6 Краткая химическая энциклопедия, т. I, 1961.